ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«____» հունիսի 2011թ. N ___Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ 20-րդ և 22-րդ հոդվածներով, 67-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով և 68-րդ հոդվածի 2-րդ մասով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. «Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել առանձնացման ձևով՝ ստեղծելով «Դավիթ Անհաղթ» բժշկական կենտրոն», «Թիվ 11 պոլիկլինիկա», «Թիվ 16 պոլիկլինիկա», «Արաբկիր մանկական պոլիկլինիկա», «Ն. Բ. Հակոբյանի անվան ընդհանուր հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունները:

2. «Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասի ձեռքբերման և մարման ճանապարհով նվազեցնել ընկերության կանոնադրական կապիտալը: Բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացնել «Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն» դուստր փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված և սեփականության իրավունքով «Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող բոլոր բաժնետոմսերով:

3. «Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն» դուստր փակ բաժնետիրական ընկերությունը վերանվանել «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն:

4. Սույն որոշման 1-ին կետի համաձայն ստեղծված «Թիվ 11 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպել՝ այն միացնելով «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը:

5. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել «Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման գործընթացի իրականացումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՔԱՆԱՔԵՌ - ԶԵՅԹՈՒՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է 2003թ.՝ ՀՀ կառավարության 30 հոկտեմբերի 2003թ. «Երևան քաղաքի առողջապահական հաստատությունների օպտիմալացման ծրագրի շրջանակներում մի շարք բաժնետիրական ընկերություններ և պետական ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմակերպելու մասին» N 1413-Ն որոշմամբ: Ըստ այդ որոշման՝ «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոնը ներառում էր Երևանի քաղաքապետարանի 8-րդ հիվանդանոցը, «Զեյթուն» բժշկական կենտրոնը (պոլիկլինիկա և ծննդատուն), թիվ 11, 16 և «Արաբկիր» մանկական պոլիկլինիկաները, Սրտաբանության, Ընդհանուր հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտները:
Օպտիմալացման ծրագրի առաջարկը եղել էր Համաշխարհային բանկի կողմից և այն ստանձնել էր միաձուլման հետևանքում ստեղծված բոլոր բժշկական կենտրոնների ֆինանսավորում՝ վերանորոգման աշխատանքներ կատարելու և սարքավորումներ ձեռք բերելու համար:

Սակայն Երևանի քաղաքապետի 19.04.2004թ. թիվ 629-Ա որոշման համաձայն՝ Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտը դարձավ դուստր փակ բաժնետիրական ընկերություն, այնուհետև ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 11-ի 1323-Ա որոշմամբ առանձին փակ բաժնետիրական ընկերություն, իսկ քաղաքապետի 15.11.2004թ. թիվ 2178 որոշման համաձայն թիվ 11 պոլիկլինիկան դարձավ «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն» ԴՓԲԸ:

Նշված առանձնացումները Համաշխարհային բանկի կողմից դիտարկվեցին որպես օպտիմալացման ծրագրի ոչ լիարժեք իրականացում և պատճառ հանդիսացան «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը Համաշխարհային բանկի ֆինանսավորման ծրագրից հանելու համար, որի արդյունքում ստեղծվեց արհեստականորեն իրար միացված երեք տարբեր գործառույթներ իրականացնող մի բժշկական կենտրոն:
Ընկերությունը ստիպված էր հիվանդանոցային պայմանները բարելավելու համար դիմել վարկային միջոցների ներգրավմանը, որպեսզի դարձներ կազմակերպությունը

մրցունակ, մասնավորապես ստեղծվեց արդիական վերակենդանացման բաժանմունք, վիրահատական սրահներ, ձեռք են բերվել բժշկական սարքավորումներ, վերանորգվել են մի քանի բաժանմունքներ և կաբինետներ:

Վճարովի ծառայությունները հիմնականում իրականացնում է ստացիոնարը, սակայն այն ամբողջությամբ հանարավոր չէ ներդնել ստացիոնարի զարգացման մեջ, քանի որ գումարներն ուղղվում են նաև մյուս օղակների ընթացիկ ծախսերի փակմանը:

Մինչ օրս «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն» ԴՓԲԸ-ի առանձնացման հետևանքով «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոնը կատարում է լրացուցիչ ծախսեր տարեկան կտրվածքով՝ ԱԱՀ-ի գծով շուրջ 5.0 մլն դրամ, շահութահարկի գծով շուրջ 6.0 մլն դրամ, «առողջության կենտրոն»-ի կողմից օգտագործվող հողամասը հաշվառվում է « Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոնի հաշվեկշռում, ինչը առաջացնում է եկամուտ տարեկան 15.0 մլն դրամի չափով, որը իրենից չի ենթադրում դրամական միջոցների ներհոսք, սակայն առաջացնում է լրացուցիչ պարտավորություն շահութաբաժնի մասով տարեկան 3.0 մլն դրամ: Բացի այդ, գործունեությունից ստացված հասույթը հիմնականում բավարարում է աշխատավարձի և սոցվճարի մարմանը /մասնավորապես «Արաբկիր» մանկական պոլիկլինիկայում այն կազմում է 92%, Հիգիենայի ԳՀԻ-ում՝ 97%/:

Տարածքային հեռավորությունը ընկերության ստորաբաժանումների միջև առաջացնում է լրացուցիչ դժվարություններ ընթացիկ աշխատանքների կազմակերպման և ֆինանասական միջոցների հավաքագրման գործընթացում: Ստորաբաժանումների ղեկավարները, քանի որ չեն կրում պատասխանատվություն վերջնական արդյունքի համար, խնայողական վերաբերմունք չեն ցուցաբերում ծախսերի նկատմամբ:

Ընկերության կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, ֆինանսական ցուցանիշները բարելավելու անհրաժեշտությունից ելնելով՝ նպատակահարմար է «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն առանձնացման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով առանձին նոր ընկերություններ՝

«Դավիթ-Անհաղթ» բժշկական կենտրոն», որի կազմի մեջ կընդգրկվեն «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ-ի պոլիկլինիկան, ծննդատունը, ռեպրոդուկտոլոգիան և գինեկոլոգիական բաժանմունքները, /տեղծված կենտրոնը կապահովի կանանց, մասնավորապես հղիների սպասարկման ամբողջական օղակ, ներդրումային

ծրագրեր իրականացնելու ուղղությամբ բանակցություններ են ընթանում/ «Ն. Բ. Հակոբյանի անվան ընդհանուր և մասնագիտացված հիվանդությունների ԳՀԻ», թիվ 11 պոլիկլինիկա, թիվ 16 պոլիկլինիկա, «Արաբկիր մանկական պոլիկլինիկա»: «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բաժնետոմսերի ձեռք բերման և մարման ճանապարհով «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն» ԴՓԲԸ վերակազմակերպել առանձին փակ բաժնետիրական ընկերության:

Նոր ընկերությունների ստեղծումը հնարավորություն կտա առանձնացված կազմակերպությունների ֆինանսական միջոցները էլ ավելի արդյունավետ և նպատակային կառավարել, վերահսկել և պայմաններ ստեղծել ֆինանսատնտեսական գործունեությունը բարելավելու և կապիտալ ներդրումներ անելու ուղղությամբ, որն էլ կբարձրացնի ազգաբնակչությանը մատուցվող բուժսպասարկման որակը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ